ՈՒՍՏԻԱՆ.– ՉԷ, չեմ թողնի, որ անես:

ՆԱԶԱՐ.– Արիւնը գլուխս մի խփիլ տա, թէ չէ վեր կացա, հա՜ա՜ա՜… Գլուխս մի տանի: Մի քիչ ազնիւ ցեղի պիտի խառնուիմ: Ժամանակ չունեմ: Բանի՛դ գնա:

ՈՒՍՏԻԱՆ.– Ձանըմ, ինչ ազնիւ ցեղ, ի՞նչ բան: Սիրտդ ուրիշ կնիկ է ուզում էդ ասա… Արարմունքդ հասկանո՞ւմ ես…

ՆԱԶԱՐ.– Խաղաղությո՛ւն ամենեցուն: Կա՛րճ կապի:

ՈՒՍՏԻԱՆ.– Հետները պիտի պսակուես՝ էդ է: Էլ կարճը ո՞րն է, երկարը ո՞րն է: (Լուռ է:) Լա՛ւ, հիմի ես ի՞նչ պիտի անեմ:

ՆԱԶԱՐ.– Եսի՞մ: Փող, ապրանք կտամ, գնա գեղը՛:

ՈՒՍՏԻԱՆ.– Բո՜ո՜… Էս տեղից հեռացողը չեմ:

ՆԱԶԱՐ.– Կերթա՛ս, Ուստիան խանում, կե՛րթաս:

ՈՒՍՏԻԱՆ.– Չե՛մ գնա: Ղալմաղա՛լ կանեմ:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ ղալմաղալ:

ՈՒՍՏԻԱՆ.– Կասեմ՝ վախկոտ ես:

ՆԱԶԱՐ.– Ո՞վ է վախկոտ:

ՈՒՍՏԻԱՆ.– Դու:

ՆԱԶԱՐ.– Գտա՛ր վախկոտը, աշխարհքնե՛ր եմ զարզանդեցնում:

ՈՒՍՏԻԱՆ.– Օյիններ են ջանըմ, սուտ բան է, Տեսնես ինչ ֆանդեր ես բանացրել: Հիմի որ բաց անեմ, ո՞նց է բանդ,

ՆԱԶԱՐ.– (Հարձակուելով Ուստիանի վրայ) Ո՛ւյ, քեզ հիմի, հառամ…մմ… (Խոսքը կիսատ՝ ներս են մտնում նազիր վեզիր, սենեկապետ, պալատականներ, թամադա, Ղոռոբուղա եւ նրանցով շրջապատուած երեք թագուհիներ, որ ժպտալով ու խունջիկ-մունջիկ անելով առաջ են գալիս եւ բարեւ բռնած կանգնում Նազարի առջեւ: Ուստիանին՝ դէմքը թթուեցնելով եւ կեղծ գործնական) Ո՛ւստիան, ժողովք է հիմի, գլուխներս խառն է, մի քիչ գնա էն օթախը:

ՈՒՍՏԻԱՆ.– (Կեղծ քաղաքավարի) Հա՞, ժողո՞վք է: Լա՛ւ: (Վեր է կենում, որ դուրս գնա աջ կողմից) Ո՛չ բարով վայելես: (Խեթ նայում է Նազարին:)

ՆԱԶԱՐ.– (Կասկածով նայում է Ուստիանին եւ ինչ-որ ուզում է անել, բայց թագուհիների տեսքը շլացնում է նրան եւ նրանց նայելով մոռանում է Ուստիանին:)

ՈՒՍՏԻԱՆ.– (հեռանալով աջ կողմից՝ մի անգամ էլ մտիկ է տալիս թագուհիներին եւ մրթմրթում:) Լրբերի՜ն մտիկ, սիրահարուե՛լ են… հո՜ղեմ ձեր գլուխը: (Դուրս է գնում:)